

Կազմված է 30.07.2018թ.  
բաղկացած է 12 թերթից  
Տպագրված է 2 օրինակ  
Օրինակ \_\_\_

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 2Ժ -18

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական  
Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի,  
կայացած 2018թ. հուլիսի 30-ին, ժամը 11-00

30.07.2018թ.

Ք. Երևան

Բաց քվեարկությամբ ժողովի նախագահ ընտրվեց ՀՀ ՊԳԿՎ պետի տեղակալ Գևորգ Լոռեցյանը, քարտուղար ընտրվեց Օ. Ամիրյանը (միաձայն):

Միաձայն բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողովը, բաղկացած երեք հոգուց Շուշանիկ Սահակյան, Արեգնազան Հովհաննիսյան, Տաթևիկ Սաֆարյան:

Հաշվիչ հանձնաժողովը զեկուցեց, որ Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցում են.

Ընկերության տեղաբաշխված 10.348.896 բաժնետոմսերի սեփականատերերից 16 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք հանդիսանում են 8.315.181 բաժնետոմսերի սեփականատերեր (80,34%), այդ թվում Ընկերության 8.279.117 բաժնեմասի սեփականատեր ՀՀ Պետական գույքի կառավարման վարչություն (80.0%) լիազոր ներկայացուցիչ Գ. Լոռեցյան:

Քվորումն ապահովված է և ժողովը անցավ օրակարգի հաստատմանը:  
Ժողովի նախագահ Գ. Լոռեցյանը ներկայացրեց ժողովի օրակարգը՝

### **ՕՐԱԿԱՐԳ**

1. Ընկերության 2017 թ. տարեկան հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2017 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
3. Ընկերության 2017 թ. շահույթ/վնասի/ հաշվի հաստատում:
4. Ընկերության 2017թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում:
5. Ընկերության խորհրդի կազմի փոփոխություն կատարելու մասին:

Ժողովի օրակարգը դրվեց քվեարկության:

Բաց քվեարկությամբ օրակարգը հաստատվեց միաձայն:

Մասնակիցներն անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

Հարց 1. <<Ընկերության 2017թ. տարեկան հաշվետվության հաստատում>>,

Հարց 2. <<Ընկերության 2017 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում>>,

Հարց 3. <<Ընկերության 2017 թ. շահույթ/վնասի/ հաշվի հաստատում>>

Ընկերության գլխավոր հաշվապահ Ա. Մակարյանը, ներկայացրեց Ընկերության 2017թ. հասույթի և ծախսերի կատարողական ցուցանիշները: Նա նշեց, որ Ընկերության կուտակված վնասը, 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, կազմել է 1 394 497,0 հազ. դրամ, ընդ որում 2017թ. վնասի չափը կազմել է 95 363,0 հազ. դրամ: Նա ներկայացրեց նաև ֆինանսական այլ ցուցանիշներ: Բաժնետերերի կողմից հնչեցված այն հարցերին, թե ինչու է կրճատվել հասույթի չափը և ինչով է պայմանավորված միավորի արժեքի վրա իրականացված ծախսաչափերի ավելացումը, Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Ադամյանը նշեց, որ դրանց կանդիդատնա իր հաշվետվության ներկայացման ժամանակ:

Այնուհետ խոսքը տրվեց Ընկերության գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Ադամյանին: Նա ներկայացրեց տարիներ ի վեր Ընկերության կուտակված վնասի առաջացման պատճառների վերաբերյալ իր դիտարկումները, մասնավորապես նշելով, որ դրան նպաստել են մի շարք հանգամանքներ, այն է.

- Ընկերությունում երկար տարիներ փաստացի հաստիքները եղել են ուռճացված, որի հետևանքով չի ապահովվել համապատասխան արդյունավետություն, և այդ պատճառով 2017թ ընթացքում կրճատվել են 15 հաստիքային աշխատողներ,

- գործել են վարձակալական պայմանագրեր, որոնք նպաստել է վնասի առաջացմանը, և այդ պատճառով լուծվել են այդ ապայմանագրերը,

- դեռևս ԵՈԳ-1 <<Գնումն>> ԲԲԸ-ի կողմից, առանց վարձակալության պայմանագրերի, շահագործվում են մոտ 700 միավոր սարքեր, սարքավորումներ, հաստոցներ, ինչպես նաև արտադրական տարածքներ:

Ինչ վերաբերվում է արտադրության ծավալների և հասույթի կրճատմանը, ինչպես նաև միավոր արտադրանքի համար ծախսերի ավելացմանը, Ա. Ադամյանը նշեց, որ դա պայմանավորված է ԵՈԳ-1 <<Գնումն>> ԲԲԸ-ի կողմից 2017թ. մայիս-հուլիս ամիսներին իրականացված 9 069,9 հազ. դրամ պատվերների դիմաց համապատասխան հաշվապահական ձևակերպումներ չանելու և 2017թ. օգոստոս ամսից ԵՈԳ-1 <<Գնումն>> ԲԲԸ-ի պատվերները չկատարելու հետևանքով: Ա. Ադամյանը նշեց նաև, որ 2016թ.

համեմատ 2017թ. վնասի չափը կրճատվել է 6 156,0 հազ. դրամով (հաշվետվությունը և համեմատական տեղեկագիրը, 5 թերթ, կցվում է):

Այնուհետ խոսքը տրվեց անկախ աուդիտորական՝ «Պրոգրես աուդիտ» ՓԲ ընկերության ղեկավար Խ. Բեգլարյանին, որը ներկայացրեց Ընկերությունում աուդիտի ենթարկված 2017թ. ժամանակահատվածի համար եզրակացությունը առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները ու դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների

Խոսք տրվեց նաև ՀՀ ՊԳԿՎ աուդիտ իրականացնող մարմնի ղեկավար Յ. Զաքարյանին, որը նույնպես հավաստեց կազմված և ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, և նշեց որ Ընկերությունում էական և լուրջ խախտումներ չեն հայտաբերվել:

Ներկայացված երեք Հարցերը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են

Կողմ՝ 8.315.181                      դեմ՝ 0                      ձեռնպահ՝ 0

**ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել**

Ընկերության 2017 թվականի տարեկան հաշվետվությունը, Ընկերության 2017 թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը և Ընկերության 2017 թ. շահույթ/վնասի/ հաշիվը:

Ժողովի Նախագահը նշեց, որ օրակարգի 4-րդ հարցը՝ «Ընկերության 2017թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում», քննարկման ենթակա չէ, գործունեության արդյունքում վնաս ունենալու պատճառով:

Հարցը չի քննարկվում և քվեարկություն չի կատարվում:

**ՈՐՈՇԵՑԻՆ՝ Օրակարգի հինգերորդ հարցը չքննարկել և չքվեարկել:**

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ ելույթ ունեցավ խորհրդի Ընկերության տնօրենների խորհրդի անդամ Ա. Մելիք-Իսրայելյանը: Նա նշեց, քանի որ աշխատանքից ազատվել են Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ Վ. Գասպարյանն ու Ընկերության նախկին տնօրեն, խորհրդի անդամ Գ. Կաֆյանը և վերջինս չի մասնակցել տնօրենների խորհրդի ու ընդհանուր ժողովի նիստերին, առաջարկեց նրանց փոխարեն խորհրդի նոր նախագահ առաջադրել ՀՀ ՊԳԿՎ պետի տեղակալ Գևորգ Լոռեցյանին, իսկ խորհրդի անդամ՝

Ներկայացված հարցերի վերաբերյալ արտահայտվելու համար խոսք խնդրեց Ընկերության տնօրենների խորհրդի անդամ, Երևանի ոսկերչական գործարան-1 <Գնումն> ԲԲԸ գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանը: Նա իր ելույթում խոսեց երկու Ընկերությունների, կոլեկտիվների միջև ստեղծված իրավիճակի և խաթարված փոխհամագործակցության

մասին: Նա նշեց, որ Ընկերությունը ունակ է արտադրելու լրիվ նոր որակի արտադրատեսակներ, աշխատելու ոչ թե վնասով, այլ հակառակը՝ շահույթով: Նա նաև նշեց, որ եթե Ընկերությունը հանձնվի իր հավատարմագրման կառավարմանը, ապա ավելի արդյունավետ տնտեսական արդյունք կարող է ապահովվել: Նա դեմ հանդես եկավ Ա. Ադամյանի որպես խորհրդի անդամ առաջադրվելուն՝ նշելով, որ Ա. Ադամյանը չունի այդ ոլորտում համապատասխան մասնագիտական փորձ և առաջարկեց որպես խորհրդի անդամ ընդգրկել ՀՀ ՊԳԿՎ այլ աշխատակցի: Ընկերության տնօրենների խորհրդի մեկ այլ անդամ, Երևանի ոսկերչական գործարան-1 <Գնոմոն> ԲԲԸ իրավաբան Է. Մաթևոսյանը, առաջարկեց մեկ այլ բաժնետիրոջ Անահիտ Ստեփանյանի թեկնածությունը՝ խորհրդի կազմում նրան ընգրկելու առաջարկով, սակայն Գ. Լոռեցյանը առարկեց խորհրդի անդամների առաջարկները՝ հիմնավորելով, որ Ա.Ադամյանի որպես խորհրդի անդամ, տնօրենների խորհրդի նիստերին մասնակցությունը, ուղղակի պարտադիր է:

Ներկայացված 5-րդ Հարցը՝ <<Ընկերության խորհրդի կազմի փոփոխություն կատարելու մասին>>, դրվեց քվեարկության և որոշվեց խորհրդի կազմում ընգրկվող թեկնածուների օգտին (կամ դեմ) քվեարկել առանձին, այսպես.

- ՀՀ ՊԳԿՎ պետի տեղակալ Գևորգ Լոռեցյանին՝ որպես <<Երևանի ոսկերչական գործարան>> ԲԲ ընկերության տնօրենների խորհրդի նախագահ ընտրելու հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

Կողմ՝ 8.313.659                      դեմ՝ 0                      ձեռնպահ՝ 1522

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել Գ. Լոռեցյանին՝ որպես Ընկերության տնօրենների խորհրդի նախագահ,

- <<Երևանի ոսկերչական գործարան>> ԲԲ ընկերության գլխավոր տնօենի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Ադամյանին՝ որպես <<Երևանի ոսկերչական գործարան>> ԲԲ ընկերության տնօրենների խորհրդի անդամ ընտրելու հարցը դրվեց քվեարկության, որի արդյունքներն են.

Կողմ՝ 8.284.258                      դեմ՝ 30.923                      ձեռնպահ՝ 0

**ՈՐՈՇԵՑԻՆ՝** Հաստատել Ա. Ադամյանին՝ որպես Ընկերության տնօրենների խորհրդի անդամ:

Ժողովի օրակարգը սպառվեց և այն հայտարարվեց փակված:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. Լոռեցյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Օ. Ամիրյան

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական Ընկերության  
բաժնետերերի 30.07.2018թ. տարեկան ընդհանուր ժողովի կողմից  
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 16 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից (10.348.896 հատ) հանդիսանում են 8.315.181 բաժնետոմսերի սեփականատեր կամ ժողովին ներկա էին 80.34% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Հանձնաժողովի անդամներ՝

Շ. Սահակյան

Ա. Հովհաննիսյան

Տ. Սաֆարյան

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական Ընկերության  
բաժնետերերի 30.07.2017թ. տարեկան ընդհանուր Ժողովի կողմից  
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց հետևյալ արդյունքները.  
(առկա 8.376.274 ձայների քանակից)

**Հարց 1. Ընկերության 2017թ. գործունեության տարեկան հաշվետվության հաստատում.**

Կողմ - 8.315.181                      դեմ - 0                      ձեռնպահ - 0

*Ընկերության 2017թ. տարեկան գործունեության հաշվետվությունը հաստատվեց:*

**Հարց 2. Ընկերության 2017թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում.**

Կողմ - 8.315.181                      դեմ - 0                      ձեռնպահ - 0

*Ընկերության 2017թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռը հաստատվեց:*

**Հարց 3. Ընկերության 2017թ. շահույթի (վնասի) հաշվի հաստատում.**

Կողմ - 8.315.181                      դեմ - 0                      ձեռնպահ - 0

*Ընկերության 2017թ. շահույթի (վնասի) հաշիվը հաստատվեց:*

**Հարց 4. Ընկերության 2017թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում.**

*Այս հարցը չի քվեարկվել՝ Ընկերության վնասով աշխատելու պատճառով:*

**Հարց 5. Ընկերության խորհրդի կազմի փոփոխություն կատարելու մասին.**

Գ. Լոռեցյան՝

Կողմ՝ 8.313.659                      դեմ՝ 0                      ձեռնպահ՝ 1522

Ա. Ադամյան՝

Կողմ՝ 8.284.258                      դեմ՝ 30.923                      ձեռնպահ՝ 0

Հանձնաժողովի անդամներ՝

- Շ. Սահակյան
- Ա. Հովհաննիսյան
- Տ. Սաֆարյան

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական Ընկերության  
բաժնետերերի 30.07.2018թ. տարեկան ընդհանուր ժողովի կողմից  
ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի

Ժողովին մասնակցում էին 16 բաժնետերեր կամ նրանց լիազոր ներկայացուցիչներ, որոնք բաժնետոմսերի ընդհանուր քանակությունից (10 348 896 հատ) հանդիսանում են 8.315.181 բաժնետոմսի սեփականատեր կամ ժողովին ներկա էին 80.34% ձայնի իրավունք ունեցող բաժնետերեր, ինչն ապահովում է քվորումը:

Նախօրոք բաժանված քվեաթերթիկների հաշվառումը ցույց տվեց, որ օրակարգի հարցը բաժնետերերը հաստատել են հետևյալ կերպ.

Հարց 1. Կողմ-8.315.181	դեմ-0	ձեռնպահ-0
Հարց 2. Կողմ-8.315.181	դեմ-0	ձեռնպահ-0
Հարց 3. Կողմ-8.315.181	դեմ-0	ձեռնպահ-0
Հարց 4. Չի քվեարկվել		
Հարց 5.		
Գ. Լոռեցյան՝ Կողմ-8.313.659	դեմ-0	ձեռնպահ-1522
Ա. Ադամյան՝ Կողմ-8.284.258	դեմ-30.923	ձեռնպահ-0

Հանձնաժողովի անդամներ՝

Շ. Սահակյան  
Ա. Հովհաննիսյան  
Տ. Սաֆարյան

Հաստատվել է  
<<Երևանի ոսկերչական գործարան>>  
Բաց բաժնետիրական ընկերության  
տնօրենների խորհրդի կողմից  
արձանագրություն N1-18, 10.07.2018թ.

<<Երևանի ոսկերչական գործարան>> բաց բաժնետիրական ընկերության  
բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

30 հուլիսի 2018 թվական

1. Ընկերության 2017թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության 2017թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
3. Ընկերության 2017թ. շահույթի (վնասի) հաշվի հաստատում:
4. Ընկերության 2017թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում:
5. Ընկերության խորհրդի կազմի փոփոխություն կատարելու մասին:



<<Երևանի ոսկերչական գործարան>> ԲԲԸ

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բ Բ Ը

N	Անուն, ազգանուն	Ծննդյան թիվը	Քաղ.	Կրթությունը	Պաշտոնը	Սովորական բաժնետոմս <<ԵՈԳ>> ԲԲԸ
Տնօրենների խորհրդի անդամներ						
1.						
2.	Արմեն Մելիք-Իսրայելյան	1963	ՀՀ	բարձրագույն	ՀՀ ԿԱ ՊԳԿՎ աշխատակազմի վարչության պետ	Չունի
3.	Վարդան Ենգիղունյան	1970	ՀՀ	բարձրագույն	ՀՀ ԿԱ ՊԳԿՎ աշխատակազմի բաժնի պետ	Չունի
4.	Արամ Հարությունյան	1970	ՀՀ	բարձրագույն	ՀՀ ԿԱ ՊԳԿՎ աշխատակազմի բաժնի պետ	Չունի
5.	Անգելինա Ավանեսյան	1986	ՀՀ	բարձրագույն	ՀՀ ԿԱ ՊԳԿՎ աշխատակազմի վարչության պետ	Չունի
6.	Էմիլ Գրիգորյան	1938	ՀՀ	բարձրագույն	ԵՈԳ-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ, Գլխավոր տնօրեն	5894
7.	Էդուարդ Մաթևոսյան	1945	ՀՀ	բարձրագույն	ԵՈԳ-1 <<ԳՆՈՄՈՆ>> ԲԲԸ, Իրավաբան	7764

Ք Վ Ե Ա Թ Ե Ր Թ Ի Կ

<<Երևանի ոսկերչական գործարան>> Բաց Բաժնետիրական Ընկերություն.

28 հունիսի 2017թ.

բաժնետերերի /լիազորված անձի/ անուն, ազգանուն      ձայների/բաժնետոմսերի/թիվը

ՀԱՐՑ 1. Ընկերության 2016թ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 2. Ընկերության 2016թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 3. Ընկերության 2016թ. շահույթի (վնասի) հաշվի հաստատում:

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 4. Ընկերության 2016թ. տարեկան շահութաբաժնի չափի հաստատում:

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

ՀԱՐՑ 5. Ընկերության տնօրենների խորհրդի կազմում փոփոխություն կատարելու մասին:

ԿՈՂՄ                       ԴԵՄ                       ՁԵՌՆՊԱՀ

